

վեն. Մ/ս. Մ/ար.» 1936, էջ 102) ժամանակի, և խոստովամբ հատուցանելոյ ամ ըստ ամէ կրկին նուագաւ ի վեց ամսոյ ի վեց ամիս լիբէ Աւստրիական 1417, 14 կանխիկ, ընդ ամենայն 2834, 28, սկսեալ ի 7 Ապրիլի 1834». («Յիշատակարան Մ. Ռ. Վրժ.ի»): Սոյն պալատին արտաքին տեսքին նկատմամբ անստորագիր նկարագրութեան մը պատճէնը կայ, գրուած Սոմալեան Աբբաճօր կողմանէ, բայց օրինակուած՝ ձեռամբ «նօտարին» (այսինքն գրագրին): «Գնացի — կ'ըսէ — ի Պատուայ (Սեպտ. 23-ին) յայցելութիւն նորոյ Մուրատեան Դպրոցին, զոր ոչ Դպրոց արժան է կոչել, այլ պալատ շքեղ, զի են ապարանք Անպուհւոյն Փիզանի Մօնէթային, ի բարեչէն տեղոջ քաղաքին. ի միոյ կողմանէ հոսէ վտակն Պոնէթայի, ի միւս կողմանէ՝ տեսիլ գեղեցկագոյնաբէ Եւգանեան բլրոցն, և պարսպի քաղաքին. օդն բարեշունչ և քաջառողջ. ի միջոցի տանն պարտէզ և դաշտավայր ի չափ երկից արտավարաց ի զօստան և ի խաղարկութիւն մանկանցն, որք կայտենն առ ցնծութեան և առ բարեբախտութեանն վիճակելոյ նոցին». (գր. առ Հ. Կարապետ Եւսեպեան, 1834 Հոկտ. 1): Բայց թէ ներքուստ ինչ ինչամբ թափուած է վրան՝ զանիկա դպրոցի յարմարցնելու համար՝ ահա Հ. Իգնատիոս Փափագեան ալ այսպէս կը պատմէ. «Բազմութիւն գործավարաց վաստակին անընդհատ, սկիզբն արարեալ ի նորոգութենէ բնակութեան Սանթօյին, որ առ ժամս նստի ի կողմն բաժնի ծառայից: — Բազատութիւն սենեկաց պալատին ի հաղորդակցութենէ միմեանց՝ զուն գործեցաք բանալ տալ գերիս դրունս ի սրահ հասարակաց: Ամենայն տախտակափեղէք պատուհանաց փողոցակողմանն պալատին նորոգ կազմին. իսկ ներքինքն կարկատին վայելչապէս: Երեքտասան սենեակք տղայոց ի վերին դստիկոնն, որպէս և մերս եօթն ի միջին յարկի՝ չունին պէտս նորոգութեան, այլ մասքութեան եւեթ, որք դիւրաւ գործին: Նոյնպէս և սեղանատուն, առ նմա լայնարձակ դիւան, և առնթրի նոցին չորք սենեակք մեծամեծք ի կողմն պարտիզին, որք մարթին լինել ուսումնասեղի և բնակարան, անկարօտ են նորոգութեան: Գլխաւոր և բազմածախ նորոգութիւնն ունի լինել ի վառարանսն խոհակերոցին, որպէս և յերկոսին հողանիստ սենեակսն ի պէտս գործակալութեան, որոց ամենեցուն խնամով միտ դնէ Վ. Հ. Սամուէլն: — Թուի թէ զգումար միամեայ վարձուց պալատիս ունի տիկինն ծախել ի պէտս այսր նորոգութեան, զոր մտադիւր հրամայեաց առնել գործակալի իւրում ի հաճել զՄիաբանութիւնս: — Ի միջոցս պարապոյ Վ. Հ. Սամուէլն հոգայ պատրաստել զկարեւոր կահս սենեկաց և անկողնոց մանկանց, որպէս և տնտեստանն». (գր. ի Փատուայի առ Գերպ. Սոմալ. 1834 Մարտ 5):

3. Բայց 1834 Սեպտեմբեր 4-ն է «սկիզբն կառուցման Մուրատեան դպրոցին ի Պատուա, ուր այսօր մտին ի բնակել ժի մանկունք ընդ առաջնորդութեամբ Հ. Իգն. Փափագեանց». («Օրագր. 1834-ի»): Վերջնոյ կրկին ընտրութեան պատճառն է՝ որովհետեւ Ապրիլ 26-ի տեսուչ ընտրուելուն յաջորդ օրը կը ստիպուին Պոլիս դրկել զինքը, ուր կը մնայ ատեն մը:

4. Ինքն իսկ Հ. Իգնատիոս իր մէկ գրով առ Սոմալեա Աբբան (գր. 1836 Դեկտ. 16) տեսութենէ հրաժարման արդար պատճառները ներկայացուցած ատեն՝ կու տայ նաեւ անոր տեւողութեան շուրջ հետեւեալ ծանօթութիւնները. «Ի լրանալ այսր ամիս — կ'ըսէ ան — լրանայ և երրորդ ամիս անուանեալ պաշտամանս, որ սկսաւ ի 1834 Յունվ.ի, յորում զամիսս ութ ընդ Վ. Հ. Սամուէլին պանդխտեցայ աստ ի պատրաստութիւն կահուց, և զամիսս քսան և ութ կապեցայ ի դպրոցիս»: Աստի կը տեսնենք նաեւ, որ իր ընտրութիւնն ու վերընտրութիւնը դպրոցին պաշտօնական սկզբբնաւորութենէն 9-10 ամիս առաջ կատարուած է:

5. Չենք գիտեր ինչ փաստի վրայ Հ. Բ. Սարգիսեան կը դնէ Հ. Մատթէոս Մաղաքեանի աշունը (տես «Երկ. կրթ. Գործ. Վեն. Մ/ս. Մ/ար.», էջ 103)՝ փոխանակ Հ. Տիմոթէոս Պէքմէզեանի՝ որ ունի հաստատուն վկայաթուղթեր վանքիս Դիւանին մէջ:

6. Սոմալ. Աբբաճայր Հ. Պետրոս Մինասեանի մասին հետեւեալ կերպով կը յայտնէ իր գոհութիւնը, թէ «փառօք պսակեալ ահա զերրորդ ամ պաշտամանն, հանդերձի արդ ուղւոյ լինել ի Հոռոմ». (գր. առ Հ. Աւետիք Աւետիքեան, 1837 Սեպտ. 15):

7. Ըստ մեկնութեան թուականի արձանագրութեան, ուր կ'ըսուի. «որ ի մետասան ամսոց հետէ կայր ի դպրատան». («Յիշատակարան»):